

ԱԼԵՔՅԱՆ ԲԱԳՐԱՏ

ԿԵՍԱՐԻ ՊԵՍ

Կեսարի պես աշխարհ եկա՝
Խոլ տարերքով մարմարիոնի,
Այցելեցի բյուր դիարան,
Դարձա նրանց տերն ու գերին,
Որպես ցնոր ու այլամարդ՝
Ոգիների սուղ տեղանքում,
Եկա՝ անտես, անդիմազարդ
Բիբլիական ու անանուն:

Արարչաժովն իմ կրօքի տակ,
Ոգեղեն թագն՝ իմ վերքերին,
Անէության կետով անցա՝
Անդենական ու երկրային,
Շուրջս՝ ավեր, անհիշատակ
Յոգնատեսիլ եղերավեճ,
Որ բերում էր այլոց սարսափ
Ու խաղաղվում իմ արյան մեջ:

Այսպես՝ մերկ ու պսակավոր
Այսպես՝ ողջ ու լուսահոգի,
Յակված անհեն ու ինքնօրոր
Խաբկանքների գոյավեմին,
Կեսարի պես աշխարհ եկա,
Բրուտոսախոց կանցնեմ հիմի,
Մահը ինչ է՝ ինձ կյանքն է գահ,
Մահ՝ ինձ համար կա ու չկա...

ՅԱՅՐ ԻՍ

Ահա արդեն քանի՜ տարի
Քարո՞ղ ուսիս գալիս եմ քեզ
Ու չեմ հասնում:
Մոլորվել եմ, հայր իմ,
Մոլորվել եմ:

Քարո՞ղ ցավից լո՞ւռ ծանրացել
Ու խրվել է իմ արյան մեջ:
Ու մենք արդեն՝ մեկ մարմնի մեջ,
Իրար միջով
Ահա արդեն քանի՜ տարի
Գալիս եմք ու չեմք հասկանում.
Թե ո՞վ ո՞ւմ է
Քեզ մոտ բերում: